

*Արձանագրություն թիվ 10*

*ԵՊՀ-ի քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,*

*կայացած 2018թ Մայիսի 25-ին*

**Օրակարգ**

1. Ֆակուլտետի ՈւԽ նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների վերաբերյալ:
2. Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2017-18 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
3. Ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
4. Կուրսային աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:
5. Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2017-18 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
6. Ֆակուլտետի ՈւԳԸ նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների մասին:
7. Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ՝ պրոֆեսոր Տ.Վ. Ղոչիկյանը ներկայացրեց հերթական գիտխորհրդի օրակարգը: Նա նշեց, որ օրակարգում ներգրավվել են միանգամից երկու նիստի հարցերը, որը պայմանավորված է ապրիլ ամսվա բաց թողնված *գիտական խորհրդի նիստով*:

**1. Պրոֆեսոր Տ.Վ. Ղոչիկյան**

ՈւԽ-ի նախագահի հարգելի բացակայության հետ պայմանավորված՝ հաշվետու տարում ՈւԽ-ի կատարած աշխատանքների մասին հակիրճ կներկայացնի ՈւԽ-ի քարտուղար, ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Բրուտյան Անահիտը:

- ՈւԽ քարտուղար Անահիտ Բրուտյանի ելույթը կցվում է:

Ելույթ ունեցողի հարցեր ուղղեցին պրոֆեսորներ Ե.Վ. Ղոչիկյանը, Ն.Ա. Դուրգարյանը, դոցենտներ Ա.Բ. Մարտիրոսյանը և Ռ.Պ. Մխիթարյանը:

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը բավարար գնահատեց ՈւՄ-ի կատարած աշխատանքը:

2. **Նիստի նախագահ, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյանը ներկայացրեց օրակարգի 2 –րդ հարցը:** Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվությունը 2017-18 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:

Ելույթ ունեցավ օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյանը: Ելույթը կցվում է:

3. Տիգրիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2017-18 ուս. տարում կատարած աշխատանքների մասին

Տիգրիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ պրոֆ. Շ.Ա.Մարգարյանի ելույթը կցվում է:

4. **Տ.Վ.Ղոչիկյան** - Օրակարգի մյուս հարցը ոչ պակաս կարևոր է: Դա կուրսային աշխատանքների ներկայացումն ու քննարկումն է: Ամբիոնի վարիչները կներկայացնեն կուրսային աշխատանքների վիճակը իրենց ամբիոններում: Խոսքը տրվում է պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյանին, այնուհետև Ռ.Ս.Հարությունյանին և Շ.Ա.Մարգարյանին:

-Ն.Ա.Դուրգարյան,- Մեր ամբիոնու մկուրսային աշխատանքների ցուցադրական պաշտպանությունը կայացել է մայիսի 24-ին: Ամբիոնում քիմիա բաժնի 3-րդ կուրսի, 6 ուսանող կատարել են իրենց կուրսային աշխատանքները: Աշխատանքները բավականին հետաքրքիր էին, օրգանական քիմիայի ծրագրից դուրս: Գնահատումը կատարվել է ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից՝ գնահատվել է ոչ միայն ուսանողի պատրաստվածությունը, այլև սլայդերի կազմումը: Վերջում գնահատականները համեմատվել են և գնահատվել: Ես գոհ եմ ուսանողների կատարած աշխատանքներից, նկատվում էր երկկողմանի լուրջ աշխատանք:

- Պրոֆեսորներ Շ.Ա.Մարգարյանը և Ռ.Ս.Հարությունյանը նշեցին, որ իրենց մոտ կուրսային աշխատանքների պաշտպանությունը կայանալու է մայիսի 29-ին:

5. **Տ.Վ.Ղուչիկյան**- Օրակարգի հաջորդ հարցը, հայցորդների և ասպիրանտների ատեստավորման հարցն է : Օրգանական քիմիայի ամբիոնում ունեն մեկ հեռակա ուսուցմամբ հացորդ, նա տարեկետում էր ձևակերպել և միայն ապրիլ ամսին նոր վերականգնվել է հետևաբար Վ.Ռ. Ֆրանգյանի ատեստավորման հարց չկա:

1 Հայցորդի և 1 ասպիրանտի ատեստավորման համար գիտխորհուրդ է դիմել Ֆիզ.կոլ ամբիոնի վարիչը, քաղվածքները ամբիոնի նիստից ներկայացված են:

Տ.Վ.Ղուչիկյանը ներկայացրեց ասպիրանտ Ա.Մխիթարյանի և հայցորդ Ջ.Գրիգորյանի կողմից հաշվետու տարում կատարված աշխատանքները:

Հաշվի առնելով ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի դրական կարծիքը՝ ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց ատեստավորել ասպիրանտ Ա.Մխիթարյանին և հայցորդ Ջ.Լ.Գրիգորյանին:

6. **Տ.Վ.Ղուչիկյան** – Լսենք ֆակուլտետի ՈւԳԸ նախագահի՝ Վարդանյան Շուշաննայի կարճ հաղորդումը կատարված աշխատանքների մասին:

**Լսեցին** – Շ. Վարդանյանի հաղորդումը և գիտխորհուրդը դրական գնահատեց ՈւԳԸ-ի կատարած աշխատանքը:

7. Ընթացիկ հարցեր բաժնում ունենք 2 հարց՝ 1-ը “Օրգանական քիմիա” բազային լաբորատորիայի ղեկավար պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյանի հաշվետվությունը 2017թ-ին լաբորատորիայում կատարած աշխատանքների մասին:

2-ը՝ դոկտորական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատում:

-Տ.Վ.Ղուչիկյանը ներկայացրեց կատարված աշխատանքը:

2017թ-ին գ/հ լաբորատորիայի կատարած աշխատանքը քիմիայի ֆակուլտետի գիտխորհուրդը գնահատեց դրական:

Ընթացիկ 2-րդ հարցը: Քիմիայի ֆակուլտետի գիտխորհուրդ է դիմել անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնը՝ ամբիոնի “Երկրաբնապահպանություն” մասնագիտությամբ տեխ.գիտ.դոկտորի աստիճանի հայցորդ Ամիր Հաջիալիի համար . դոկտորական ատենախոսության վերնագիր հաստատել ներքոհիշյալը՝ “ Արդյունաբերական և կոմունալ կենցաղային թափոնաջրերի մաքրման նոր մեթոդների մշակում և ներդրում”, իսկ խորհրդատու տեխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Գ.Պ.Փիրումյանը:

Պրոֆ. Գ.Պ.Փիրումյանը ներկայացրեց մեկ տարվա ընթացքում հայցորդ Ամիր Հաջալիի կատարած աշխատանքները և նրա տպագրած աշխատանքների ցանկը: Որոշեցին հաստատել տեխ.գիտ.դոկտորի աստիճանի հայցորդ Ամիր Հաջալիի համար. դոկտորական ատենախոսության վերնագիր “ Արդյունաբերական և կոմունալ կենցաղային թափոնաջրերի մաքրման նոր մեթոդների մշակում և ներդրում”, իսկ խորհրդատու տեխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Գ.Պ.Փիրումյանին:

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր՝

Տ.Վ.Ղուչիկյան

Գիտ. քարտուղար, դոցենտ՝

Մ.Ա.Սամվելյան